

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐՆ
ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

**Գ.Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ – ԲԴԽ նախագահ,
իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր**

Ժամանակակից սահմանադրությունների ի հայտ գալու հետ միաժամանակ սահմանադրական ճարտարապետության հիմնարար խնդիրը եղել ու շարունակում է մնալ պետական իշխանության գործառնության հստակ բաժանումն ու հաշվեկշռվածության ապահովումը: Մարդու և քաղաքացու իրավունքների 1789թ. ֆրանսիական հոչակագրի 16-րդ հոդվածում դիպուկ է ասված. «Այն հասարակությունը, որում ապահովված չեն իրավունքի երաշխիքները և չկա իշխանությունների բաժանում, չունի Սահմանադրություն»: Իսկ ԱՄՆ 4-րդ նախագահ Ջ. Մեդիսոնն ընդգծել է, որ մրցակցող ու հակադիր շահերի սահմանադրական հաշվեկշռումը կարող է զսպել իշխանությանը և երաշխավորել ազատությունը¹:

Անհրաժեշտ է նաև արձանագրել, որ արդի սահմանադրական լուծումներում իշխանությունների բաժանման տասնյակ տարբեր դոկտրինալ մոտեցումներում ընդհանրականը, միանշանակ ու անվիճելի համարվողը միայն իշխանությունների բաժանման և հավասարակշռման **անհրաժեշտության տեսական փաստարկումն է**: Կոնկրետ մոտեցումները, ձևերը և եղանակները, առավել ևս՝ գործնական լուծումներն էապես տարբերվում են յուրաքանչյուր սահմանադրական համակարգում²:

Պատմական իրողություն պետք է դիտարկել, որ ամերիկյան սահմանադրագիտության մեծագույն նվաճումներից մեկը հենց այն է, որ ԱՄՆ Սահմանադրության մեջ **իշխանությունների բաժանման դոկտրինան ձևոր բերեց**

¹Տե՛ս *Passel G.* Конституционализм: опыт Америки и других стран – <http://www.infousa.ru/government/dmpaper2.htm> (09.03.2009).

² Այս հիմնախնդիրը համակողմանի քննարկման առարկա դարձավ ու նման իրավիճակն արձանագրվեց նաև 2011 թվականի հունվարի 16-18-ին Ռիո դե Ժանեյրոյում հրավիրված՝ Սահմանադրական դատարանների համաշխարհային կոնգրեսում, որին մասնակցում էին 100-ից ավելի երկրների ու երկու տասնյակից ավելի միջազգային կազմակերպությունների պատվիրակություններ, որտեղ լիազումար նիստում մեր կողմից ներկայացվեց հիմնախնդրին նվիրված ծավալուն հայեցակարգային զեկույց: (Մասնավորապես տե՛ս https://www.venice.coe.int/WCCJ/Rio/WCCJ2_programme3_RUS.pdf):

համակարգային ամբողջականություն և զսպումների ու հակակշիռների համակարգի ներդրումով Սահմանադրությանը հաղորդվեց հասարակական հարաբերությունների դինամիկ կարգավորման բնույթ, սահմանադրական համակարգը տեղափոխվեց զարգացող հավասարակշռության ռելսերի վրա:

Ելակետային պետք է դիտարկել այն հանգամանքը, որ իշխանությունների սահմանադրական հավասարակշռության ապահովումը մեծապես պայմանավորված է իշխանությունների գործառույթային, հակակշռող և զսպող լիազորություններով, ինչպես նաև իշխանությունների զսպման ու սահմանափակման համասոցիալական ներուժի իրացման հարցում քաղաքացիական հասարակության իրական դերով ու իրավունքի գերակայության երաշխավորման աստիճանով:

Սահմանադրական հավասարակշռության գործառույթը շատ տպավորիչ է նկարագրել պրոֆեսոր Ս. Հոլմսը, նշելով, որ «... XVIII դարում ընդունված ԱՄՆ Սահմանադրությունը հենվում է երեք սկզբունքների վրա, որոնք գործում են նաև մեր ժամանակներում. 1) բոլոր մարդիկ, ներառյալ քաղաքական էլիտան, հակված են սխալվելու, 2) բոլոր մարդիկ, հատկապես քաղաքական էլիտան, չեն սիրում ընդունել իրենց սխալները, 3) բոլոր մարդիկ, հատկապես քաղաքական էլիտան, ներկայումս գտնվելով օպոզիցիայում, հաճույք են ստանում քաղաքական կամ բյուրոկրատական շրջանակների իրենց հակառակորդների բացթողումների և կեղծ քայլերի բացահայտումից: Սահմանադրությունը փորձում է ստիպել այդ սկզբունքներին ծառայել իրենց նպատակին, կոպիտ ասած՝ իշխանության մի թևին սխալ գործելու գերապատվություն տալ, իսկ մյուս երկուսին իրավունք՝ այն շտկելու (գումարած հասարակությունը և մամուլը)»³:

Ներկա ազատական ժողովրդավարությունը նույնպես հենված է «երեք հիմնական կետերի վրա». **իրավունքի գերակայություն, իշխանությունների բաժանման սկզբունք, ժողովրդական ինքնիշխանություն:** Սոցիալական պրակտիկայում դրանց հավասարակշռված դրսևորումը պայմանավորում է սահմանադրականության բնույթը տվյալ հասարակությունում: Մեզ համար սկզբունքային է այն հայեցակարգային մոտեցումը, որ միայն իրավական պետությունում է հնարավոր

³Տե՛ս *Стивен Холмс*. Конституции и конституционализм //Сравнительное конституционное обозрение, 2012, N3(88), էջ 68:

երաշխավորել սահմանադրական ժողովրդավարություն, որն իր հերթին ենթադրում է օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների հստակ բաժանում ու հավասարակշռում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 4-րդ հոդվածը որպես նորմ-սկզբունք է սահմանել, որ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա: Նման ձևակերպումն առաջին հերթին հայեցակարգային, արժեքանական նշանակություն ունի: Էական է նաև այն, թե ինչպես է գործնականում տվյալ նորմ-սկզբունքն իրացվում սահմանադրական իրավակարգավորումների մակարդակում ու իրական կյանքում:

Ինչպե՞ս է գործնականում լուծվում իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիմնախնդիրն արդի միջազգային սահմանադրաիրավական զարգացումների հոլովույթում՝ հաշվի առնելով այն օբյեկտիվ իրողությունը, որ աշխարհում ի հայտ եկան հատուկ մասնագիտացված պետական ինստիտուտներ՝ ի դեմս սահմանադրական դատարանների ու դատական (մագիստրատուրայի) խորհուրդների, որոնք պարտավոր են անկախաբար ապահովել Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը և դատական իշխանության անկախությունը:

Համոզված ենք, որ մեծ հաշվով իշխանությունների բաժանման ու հավասարակշռման ամերիկյան դոկտրինան ամբողջապես կենսունակ է նաև մեր օրերի համար: Այս համակարգի արդյունավետ գործողության հիմնական պահանջները, կարծում ենք, հանգում են հետևյալ նախադրյալների երաշխավորմանը.

Նախ՝ իշխանությունների բաժանումն առաջին հերթին գործառույթային է և ոչ թե կառուցակարգային, ինչը հաճախ շփոթվում է նույնիսկ սահմանադրական լուծումների մակարդակում: Ընդ որում, որոշակի, առանձին սահմանադրաիրավական գործառույթներ կարող են իրականացնել տարբեր սահմանադրական ինստիտուտներ:


Երկրորդ՝ սահմանադրական ճարտարապետության գլխավոր խնդիրն առաջին հերթին գործառույթ-ինստիտուտ-լիազորություն շղթայում ներդաշնակ հավասարակշռության ապահովումն է՝ երաշխավորելով սահմանադրական գործառույթների համակարգային ամբողջականությունը, այն կրող ինստիտուտների կառուցակարգային լիարժեքությունը, դրանց լիազորությունների ներդաշնակությունը գործառույթներին:

Երրորդ՝ սկզբունքային են սահմանադրական ինստիտուտների գործառութային, հակակշռող և զսպող լիազորությունների հստակ բաժանումը և այդ լիազորությունների օպտիմալ հավասարակշռումը հենց սահմանադրական մակարդակում:

Չորրորդ՝ արդի սահմանադրագիտության անհետաձգելի խնդիրներից է ներսահմանադրական ինքնապաշտպանության կենսունակ և արդյունավետ համակարգի ներդրումը, որը կերաշխավորի դինամիկայում սահմանադրական ֆունկցիոնալ հավասարակշռության խախտումների ժամանակին բացահայտումը, գնահատումը և վերականգնումը: Դա, ըստ էության, սահմանադրական ախտորոշման ու մշտադիտարկման հիմնական առաքելությունն է:

Միեմատիկ ձևով նման համակարգն ունի հետևյալ պատկերը.

ՍԱՏԱՐԱԿՐԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐ



Վերոթվարկյալ նախադրյալների ապահովման հիմնական չափորոշային բնութագրերն են.


1. իշխանության ճյուղերի գործառույթային անկախության ապահովումը,
2. այդ գործառույթները կրող սահմանադրական ինստիտուտների լիազորությունների լրիվության և ֆունկցիոնալ համապատասխանության երաշխավորումը,

3. սահմանադրական յուրաքանչյուր ինստիտուտի համար գործառույթային, հակակշռող և զսպող լիազորությունների համակարգային ներդաշնակումը,

4. դինամիկայում, իրական կյանքում սահմանադրական ֆունկցիոնալ հաշվեկշռի անխախտության և անընդհատության ապահովումը, ինչն իր հերթին ենթադրում է իրական կյանքից Սահմանադրության, այսպես կոչված, խորթացման անթույլատրելիությունը:

Էական ենք համարում հատուկ ընդգծել, որ չի կարող լինել սահմանադրական գործառույթ, որը չունենա այն կրող համարժեք սահմանադրական ինստիտուտ: Ինչպես նաև չի կարող լինել սահմանադրական ինստիտուտ, որը, գործառույթային լիազորությունների հետ մեկտեղ, այս կամ այն չափով չունի հակակշռող և զսպող լիազորություն: Սահմանադրության 2-րդ անփոփոխելի հոդվածում սահմանված է, որ «Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով»: Ակնհայտ է, որ Սահմանադրությունը հանրային իշխանության լիազորություններով օժտում է բացառապես երկրի Հիմնական օրենքով նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց: Նման մոտեցումն առավել մեծ նախադրյալներ է ստեղծում իշխանությունների սահմանադրորեն ամրագրված գործառույթային դինամիկ հավասարակշռությունն իրական կյանքում երաշխավորելու համար:

Ներկայացված մոտեցումների հիման վրա կարող ենք հստակեցնել իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հետևյալ հիմնական չափանիշները.



V_i - իշխանության i -րդ ճյուղն է,
 $f(t)$ - հանրային իշխանությունների գործառությունների հանրագումարն է t ժամանակի մեջ,
 F_i - իշխանության i -րդ ճյուղի գործառությունների ամբողջությունն է,
 A_i - իշխանության i -րդ ճյուղի լիազորությունների ամբողջությունն է,

Ակնհայտ է, որ առաջնային խնդիրն իշխանության յուրաքանչյուր թևի գործառույթային անկախության երաշխավորումն է: Դա առաջին հերթին վերաբերում է դատական իշխանությանը, քանի որ անկախաբար արդարադատության իրականացումն իշխանության այս թևի առաջնահերթ **գործառույթային լիազորությունն է:**

Եթե լիազորությունների ամբողջականությունը և գործառույթներին համարժեքությունը երաշխավորված չեն, մի կողմից, տեղ են գտնում չլուծվող, «անհասցե» խնդիրներ, մյուս կողմից՝ ծաղկում են ստվերային հարաբերությունները:

Կարևոր է ընդգծել, որ սահմանադրական համակարգը գործուն է դառնում ոչ թե ստատիկ հավասարակշռության պայմաններում, այլ երբ երաշխավորված են դինամիկ հավասարակշռությունը և դրա յուրաքանչյուր խախտման ժամանակին բացահայտումն ու վերականգնումը:

Նոր ժողովրդավարության տարբեր երկրների սահմանադրությունների ուսումնասիրությունից հետևում է, որ այդ մակարդակի վրա ձևականորեն իրավական պետությունը, ժողովրդաիշխանությունը, իրավունքի գերակայությունը, մարդու արժանապատվությունը, ազատությունը, սահմանադրական ժողովրդավարությունը, իշխանությունների բաժանումը, հասարակական համաձայնությունը, հավասարությունը, բազմակարծությունը, հանդուրժողականությունը, փոխհամաձայնությունը և այլ հանրաճանաչ սահմանադրական արժեքներ դարձել են սահմանադրական լուծումների հիմքը: Սակայն, դրա հետ մեկտեղ, ռեալ իրականությունն այդ երկրներում այլ է, այն հայտնվել է ուրիշ չափելիությունում⁴:

Այս երկրներից մեծ մասում լիարժեք չի ապահովվում Սահմանադրության ինքնաբավությունը, **հիմնարար սահմանադրական արժեքներն ու սկզբունքներն էապես կտրված են սոցիալական իրականությունից, և ի հայտ է գալիս սահմանադրականության լրջագույն դեֆիցիտ**⁵:

⁴ Վերջին տասնամյակում նման իրավիճակ է առկա նաև Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում, որոնցում իրավունքի գերակայության ինդեքսի անկման մտահոգիչ միտումներ են առկա /հատկապես Հունգարիայում, Լեհաստանում, Ռումինիայում, Սլովակիայում, Բուլղարիայում, Չեխիայում – տե՛ս <https://worldjusticeproject.org/our-work/wjp-rule-law-index/wjp-rule-law-index-2017-2018/>:

⁵ Այդ մասին մանրամասն տե՛ս Գ.Գ. Հարությունյան, Սահմանադրական մշակույթ. Պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները: Երևան, 2016:

Նման վիճակը բացառելու ելակետային խնդիրներից մեկը Սահմանադրության կառուցվածքային ճիշտ լուծում որդեգրելն է: Օրինակ, 2005թ. փոփոխություններով Սահմանադրության կառուցվածքը, գործառույթային հավասարակշռության տեսանկյունից, անտրամաբանական էր ու անհետևողական: Սահմանադրական կարգի հիմունքների ու մարդու իրավունքների գլուխներից հետո ներկայացվում էին Նախագահի, խորհրդարանի և կառավարության ինստիտուտները և դրանց կողքին, որպես առանձին գլուխ, առանձնացվում էր **դատական իշխանությունը**: Ոչ միայն խաթարված էր բուն Սահմանադրության կառուցվածքային տրամաբանությունը, այլև դատական իշխանության ֆունկցիոնալ համակարգում ներառված էին ինստիտուտներ, որոնք դատական իշխանության կրող չէին հանդիսանում: Կառուցվածքային նման անհետևողականությունն անհստակություններ է ծնում նաև իշխանությունների բաժանման համակարգում: Նման վիճակ առկա է շատ երկրների Հիմնական օրենքներում /Բոլիվիա, Հունաստան⁶, Բուլղարիա, Խորվաթիա, Ուզբեկստան, Ռուսաստանի Դաշնություն, Ճապոնիա և այլն/: Դրա հետ մեկտեղ, կան երկրներ, որոնք ոչ միայն սահմանադրորեն ամրագրել են իշխանությունների բաժանման հստակ ֆունկցիոնալ կառուցվածք, այլև Սահմանադրության առանձին հոդվածով կամ գլխով բացահայտել են իշխանությունների բաժանման բնույթը: Օրինակ՝ Մեքսիկայի Սահմանադրության 3-րդ բաժնի 1-ին գլխի 49-րդ հոդվածով սահմանված է, որ Դաշնության բարձրագույն իշխանությունն իրականացնելու համար այն բաժանվում է օրենսդրի, գործադիրի ու դատականի: **Երկու կամ բոլոր երեք իշխանությունները երբեք չեն կարող միավորվել մեկ մարդու կամ մեկ կորպորացիայի ձեռքում**, իսկ օրենսդիր իշխանությունը չի կարող վերապահվել մեկ անձի, բացի Դաշնության գործադիր իշխանությանն արտակարգ լիազորությունների տրամադրման դեպքերից՝ 29-րդ հոդվածի դրույթներին համապատասխան: Ոչ մի այլ դեպքում, բացառությամբ 131-րդ հոդվածի երկրորդ պարբերության, գործադիր

⁶Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ Հունաստանի Սահմանադրության 26-րդ հոդվածը սահմանում է, որ օրենսդիր գործառույթն իրականացվում է պառլամենտի և երկրի Նախագահի կողմից, գործադիր գործառույթն իրականացվում է երկրի Նախագահի ու կառավարության կողմից, իսկ դատական գործառույթն իրականացվում է դատարանների կողմից, որոնց որոշումներն ընդունվում են Հունաստանի ժողովրդի անունից:

իշխանությանը չի կարող օրենքների հրապարակման արտակարգ լիազորություն տրվել:

Իշխանությունների բաժանման էության հստակ սահմանադրական բանաձևումն էապես բարձրացնում է այդ դոկտրինի պրակտիկ իրացման երաշխիքները: Կարծում ենք, որ անկախ կառավարման ձևի ընտրությունից ու սահմանադրականության զարգացման մակարդակից, առավել ճիշտ ընտրություն են կատարել այն երկրները, որոնք սահմանադրական կառուցվածքային լուծումների հիմքում դրել են կամ կառուցակարգային մոտեցումը (Իտալիա, Պորտուգալիա, Բելգիա, Լեհաստան, Հայաստան (ըստ 2015թ. փոփոխությունների) և այլն), կամ ֆունկցիոնալ մոտեցումը (Ավստրիա, Բրազիլիա, Սլովակիա և այլն):

Նոր ժողովրդավարության երկրներում սահմանադրական ձևախեղումների բնորոշ գծերից մեկն էլ դատական իշխանության ոչ բավարար անկախությունն է: Ինչպես նշում է պրոֆեսոր Ս. Հոլմսը վերոնշյալ հոդվածում, իր ժամանակին Մոնտեսքյոն պնդում էր, որ թագավորը, որը գործում էր որպես դատավոր և դրանով խաթարում գործադիր ու դատական իշխանությունների սահմանադրական բաժանումը, հեշտությամբ կարող էր անբարեխիղճ վկաների և գործընթացի մյուս մասնակիցների խաղալիքը դառնալ, որոնք ձգտում են հանրային իշխանությանը պարտադրել ծառայելու անձնական կամ խմբային անօրինական շահերին: «Օրենքը՝ արքայի աչքն է, որի օգնությամբ նա տեսնում է այն, ինչն առանց դրա տեսնել չէր կարող: Իրեն դատավորի պարտականությունն վերապահելով, նա գործում է ոչ իր օգտին, այլ իրեն հրապուրողների օգտին՝ ի վնաս իրեն»⁷:

Միջազգային, մասնավորապես՝ եվրոպական սահմանադրական զարգացումների ներկա միտումները թույլ են տալիս անել մի շարք սկզբունքային ընդհանրացումներ, որոնցից հատուկ ուշադրության են արժանի.

1) ժողովրդավարությունը՝ որպես սոցիալական հանրության այլընտրանք չունեցող արժեք, կարող է առկա լինել այն չափով, որ չափով երաշխավորված է իրավունքի գերակայությունը, որի պայմաններում միայն կարող է կյանքի կոչվել իրավական ժողովրդավարությունը,

⁷ Montesquieu. Spirit of the Laws / Trans. by Th. Nugent. New York: Hafner Press, 1975. Vol. I. Bk. 6. Ch. 4. - P. 73.

2) իրավունքի գերակայությունը և սահմանադրական ժողովրդավարությունն առկա են այնտեղ ու այն չափով, որտեղ և որքանով գոյություն ունեն իշխանությունների իրական բաժանում ու հավասարակշռում, քաղաքական, տնտեսական ու վարչական ներուժի օպտիմալ ապակենտրոնացում, անկախ դատական համակարգ, ազատ մամուլ, երաշխավորված, ազատ ու արդար ընտրական գործընթաց, քաղաքացիական հասարակության կողմից վերահսկվող իշխանություն,

3) առանց սահմանադրական ժողովրդավարության որոշակի արժեքային միջավայրի և անհրաժեշտ ու բավարար նախադրյալների ստեղծման, անցումային համակարգերի առանձնահատկությունների խոր ու համակողմանի գնահատման անհնարին է հաղթահարել համակարգային ձևախեղումների ինտեգրիան և երաշխավորել իրական սահմանադրական զարգացում, այսպես կոչված՝ «ժողովրդավարության ներմուծման» ճանապարհով:

Իշխանությունների բաժանման համակարգում դատական իշխանության դերն ու դերակատարությունը բացառիկ է ու առանձնահատուկ:

Բացառիկությունն առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ իշխանության այս ճյուղին է իրավասություն վերապահվում գնահատել օրենսդիր ու գործադիր իշխանությունների գործունեության սահմանադրականությունն ու օրինականությունը և նրանց պահել սահմանադրական հավասարակշռության դաշտում: Դա բխում է Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներից, համաձայն որոնց. «1. Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

2. Արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է»:

Սահմանադրության 164-րդ հոդվածով սահմանված են այն հիմնարար երաշխիքները, որոնք անհրաժեշտ են դատավորի անկախ ու անաչառ գործունեությունը երաշխավորելու համար:

Արդարադատության անկախության կարևոր երաշխիքներ են նաև Սահմանադրության 166-րդ հոդվածում ամրագրված կառուցակարգային, ինչպես

նան 168-րդ, 171-րդ և 172-րդ հոդվածներով ամրագրված գործառության ին Երաշխիքները:

Սահմանադրությամբ դատական իշխանությանն է բացառիկ իրավասություն վերապահված լուծել իշխանության մարմինների սահմանադրական լիազորությունների հարցերով առաջացած վեճերը և պաշտոնապես բացահայտել սահմանադրական նորմի իրավական բովանդակությունը՝ ձևավորելով որոշակի նախադեպային իրավունք:

Դատական իշխանությունն է երաշխավորում Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների անմիջական գործողությունը, որով Սահմանադրության 3-րդ անփոփոխելի հոդվածի ուժով սահմանափակված են իշխանությունները, ինչպես նաև մարդու դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրացումը:

Դատական իշխանության ինստիտուտների կազմավորման կարգն ու գործունեության անկախության ապահովման սահմանադրական երաշխիքները կոչված են իշխանության այս թևին հեռու պահելու քաղաքական գործընթացներից ու քաղաքական ազդեցություններից, և նույնիսկ այն դեպքերում, երբ օրենսդիր ու գործադիր իշխանությունների համապատասխան ինստիտուտները կազմավորվում են մեկ քաղաքական ուժի կողմից, իշխանությունների զսպման ու հակակշռման հիմնական առաքելությունը գործնականում պետք է իրականացնի դատական իշխանությունը: **Վերջինս հնարավոր է դառնում, երբ երաշխավորված է իրավունքի գերակայության սկզբունքը և առկա է իրավական ժողովրդավարություն, ինչպես նաև սահմանադրական, քաղաքական ու պառլամենտական մշակույթի անհրաժեշտ ու բավարար մակարդակ:**

Բոլոր այն դեպքերում, երբ տվյալ նախադրյալները բացակայում են և իշխանությունների բաժանման համակարգում թերագնահատվում է դատական իշխանության պետաիշխանական ինքնուրույն առաքելությունը, ոչ միայն չի կարող լինել անկախ ու անաչառ արդարադատություն, այլև անխուսափելի են քաղաքական ու վարչական մենիշխանության հաստատումը և իշխանությամբ իրավունքի սահմանափակումը, ինչը վերջին հաշվով հանգեցնում է քաղաքական, տնտեսական ու վարչական ներուժի սերտաճման:

Նշված ենթատեքստում պետք է դիտարկել ու արժեվորել անկախ սահմանադրական մարմնի՝ Բարձրագույն դատական խորհրդի տեղն ու դերն իշխանությունների բաժանման ու հավասարակշռման համակարգում:

Սահմանադրությունը տվյալ խնդրին լուծում տվել է թե՛ կառուցակարգային և թե՛ գործառույթային առումով: Նախ՝ Սահմանադրությամբ նախատեսվել է **անկախ պետական մարմնի** առկայություն: Մասնավորապես, 173-րդ հոդվածով սահմանված է, որ **Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը**: Այդ առաքելությունն իրականացնելու համար Բարձրագույն դատական խորհուրդն օժտվում է դատարանակազմական, իրավակազմակերպչական, դատական իշխանության համակարգում կադրային քաղաքականության իրականացման, դատավորների գնահատման ու օրենքի առջև հաշվետվողականության երաշխավորման, նրանց արդյունավետ աշխատանքի նախադրյալների ապահովման սահմանադրական մի շարք լիազորություններով, որոնց իրականացումն է համակարգային առումով երաշխիք դառնում դատարանի ու դատավորների անկախության ապահովման համար:

Սահմանադրության 175-րդ հոդվածը, մասնավորապես, սահմանում է, որ.

1. Բարձրագույն դատական խորհուրդը՝

1) կազմում և հաստատում է դատավորների թեկնածուների, ներառյալ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակները.

2) Հանրապետության նախագահին առաջարկում է նշանակման ենթակա, ներառյալ առաջխաղացման կարգով նշանակման ենթակա դատավորների թեկնածուներին.

3) Հանրապետության նախագահին առաջարկում է նշանակման ենթակա դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների թեկնածուներին.

4) Ազգային ժողովին առաջարկում է Վճռաբեկ դատարանի դատավորների և նախագահի թեկնածուներին.

5) լուծում է դատավորներին մեկ այլ դատարան գործուղելու հարցը.

6) լուծում է իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը.

7) լուծում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը.

8) լուծում է դատավորների լիազորությունների դադարեցման հարցը.

9) հաստատում է իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվները և ներկայացնում Կառավարություն՝ օրենքով սահմանված կարգով պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար:

Ընդ որում, Սահմանադրության նույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված է, որ Բարձրագույն դատական խորհրդի այլ լիազորությունները և գործունեության կարգը սահմանվում են Դատական օրենսգրքով:

Անհրաժեշտ է կատարել հետևյալ կարևոր հավելումն առ այն, որ Սահմանադրությունը Բարձրագույն դատական խորհրդին օժտել է նաև իրավասությամբ՝ հաղթահարելու Հանրապետության նախագահի առարկությունները՝ ներկայացված թեկնածուների նշանակման ժամանակ ծագած անհամաձայնությունների պարագայում, իսկ դատավորների լիազորությունների դադարեցման հարցը բացառապես վերապահված է Բարձրագույն դատական խորհրդին: Սա նշանակում է, որ դատական կորպուսի ձևավորման, կադրային քաղաքականություն իրականացնելու հարցերում Բարձրագույն դատական խորհրդի դերակատարությունն առանցքային է:

Իշխանությունների բաժանման ու հավասարակշռման համակարգում Բարձրագույն դատական խորհրդի տեղի ու դերի գնահատման առաջին ու հիմնական չափանիշը հիշյալ և Դատական օրենսգրք սահմանադրական օրենքով ամրագրված լիազորությունների իրականացման ճանապարհով դատական իշխանության անկախության երաշխավորումն է:

Առանձնահատուկն ու ուշադրության արժանին այստեղ այն է, որ Բարձրագույն դատական խորհրդի պարագայում այս լիազորությունը գործառութային լիազորություն է: Նման բնույթ ունի նաև Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի իրացումն անկախ դատարանների կողմից՝ մարդու հիմնական

իրավունքների անմիջական գործողության երաշխավորումը, որով սահմանափակվում է հանրային իշխանությունը: Դատական իշխանության այս գործառույթն առանցքային նշանակություն ունի թե՛ իշխանությունների գործառույթային հավասարակշռության ապահովման և թե՛ իրավունքի գերակայության երաշխավորման տեսանկյունից:

Բարձրագույն դատական խորհրդի գործառույթների ամբողջականության և դրան համարժեք՝ լիազորությունների ներդաշնակ ու գործուն համակարգի իրավական ամրագրման հարցերին մեծ կարևորություն է տվել նաև Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովն իր մի շարք զեկույցներում⁸: Դրանցում, մասնավորապես, շեշտվում է, որ **Բարձրագույն դատական խորհրդի իրական անկախությունը պետք է համարժեք լինի Սահմանադրությամբ նախատեսված անկախության իրավական բովանդակությանը, Խորհրդի գործունեության արդյունավետությունն ու լիարժեքությունը որևէ չափով չպետք է կաշկանդված լինի իշխանության ճյուղերի որևէ մարմնի, այդ թվում ընդհուպ դատավորների ինքնակառավարման մարմինների հնարավոր ներազդեցությամբ: Վերջինս հատկապես վերաբերում է դատավորների կարգապահական վարույթների իրականացմանը:**

Իր հերթին, Բարձրագույն դատական խորհրդի արդյունավետ գործունեությունը պետք է երաշխիք լինի դատավորի անկախության ամրապնդման, նրա մասնագիտական որակների բարձրացման, արդարադատության հանդեպ հասարակական պատշաճ վստահության ապահովման հարցերում:

Նշված համատեքստում միջազգային պրակտիկան կարևորում է նաև դատական իշխանության համակարգում կադրային այնպիսի քաղաքականության իրականացումը, որը, մի կողմից, ապահովում է դատավորների անկախությունը, մյուս կողմից՝ դատավորի կերպարը գնահատելի ու գրավիչ է դառնում հատկապես երիտասարդության համար և դատավորի պաշտոնի թափուր տեղերի լրացումն իրականացվում է լայն մրցակցության պայմաններում:

Սահմանադրական ճարտարապետության կարևոր առանձնահատկություններից մեկն էլ հենց այն է, որ Սահմանադրության մակարդակում պետաիշխանական անկախ գործառույթով օժտված ինստիտուտներին համարժեք դերակատարություն է

⁸ Այդ մասին տե՛ս հանձնաժողովի հետևյալ զեկույցները. CDL-AD(2007)028, CDL-AD(2014)008, CDL-AD(2018)028, CDL-AD(2018)029, CDL-AD(2018)032, CDL-AD(2018)033.

վերապահվում իշխանությունների բաժանման հավասարակշռության ապահովման հարցում:

Իշխանությունների բաժանման ու հավասարակշռման համակարգում Սահմանադրությունը Բարձրագույն դատական խորհրդին նույնպես օժտել է նման հակակշռող կարևոր լիազորությամբ: Առաջին անգամ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով նախատեսվեց, որ Սահմանադրական դատարանը լուծում է սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերը /հոդված 168-րդ/: Իսկ 169-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսվեց, որ տվյալ հարցով Սահմանադրական դատարան կարող է դիմել Բարձրագույն դատական խորհուրդը: Նման սահմանադրաիրավական կարգավորումը մեր երկրում առաջին անգամ հստակ երաշխիք է սահմանում դատական իշխանության կողմից՝ Բարձրագույն դատական խորհրդի միջոցով, քննարկման առարկա դարձնել և լուծել իրական կյանքում սահմանադրական լիազորությունների հաշվեկշռի յուրաքանչյուր խաթարում՝ պայմանավորված իշխանության այլ ինստիտուտների գործողությամբ կամ անգործությամբ: Այսպիսի սահմանադրաիրավական կարգավորման առկայությունը Սահմանադրության ինքնաբավության ապահովման կարևորագույն երաշխիք է:

Ասվածին հարկ է ավելացնել նաև այն, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքն արդյունավետ կարող է կյանքի կոչվել այնպիսի հասարակական հարաբերությունների պայմաններում, երբ սահմանադրական ժողովրդավարությունը կյանքի անխախտելի կանոն է դառնում, առկա չէ քաղաքական կամ վարչական մենիշխանություն, երբ յուրաքանչյուր անձի սոցիալական վարքագծի, քաղաքական ինստիտուտների քաղաքական վարքագծի և հանրային իշխանությունների հանրային վարքագծի հիմքում դրված է իրավունքի գերակայության սկզբունքը: Ակնհայտ է, որ հիմնախնդրին պետք է մոտենալ համակարգային ամբողջականության տեսանկյունից: Ուստի Բարձրագույն դատական խորհրդի տեղն ու դերն իշխանությունների բաժանման ու հավասարակշռման համակարգում կարող է առավելագույնս արդյունավորվել հենց նման համակարգային երաշխիքների ապահովման շրջանակներում: